Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ ***2021 թվականի սեպտեմբերի 12-ին (կիրակի օր), ժամը 09^{30}-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցով.***

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն:***

1. Օրակարգային հարցով **քվեարկությունը** սկսվում է **2021 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 09^{30}-ից և ավարտվում է նույն օրը՝**

ժամը 17^{30}-ին:

2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2021 թվականի օգոստոսի 15-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի**

օգոստոսի 20-ին (ներառյալ):

3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2021 թվականի օգոստոսի 21-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 18^{00}-ին**:

4. **2021 թվականի սեպտեմբերի 11-ը համարվում է լռության օր:**

5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.08.2021թ. թիվ 150-Լ որոշումը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ